ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՁԱՕԿ-ԳՀ-ԱՊՁԲ-19/39» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան «01» «հոկտեմբերի» 2019թ.
ժամը 11 00.

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Է. Դանիելյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Մ. Քոչարյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ. Ավագյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Գ. Սիմոնյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Վ.Պետրոսյան

1. «ՁԱՕԿ-ԳՀ-ԱՊՁԲ-19/39» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ա. Մուրադյան)

1.1. «ՁԱՕԿ-ԳՀ-ԱՊՁԲ-19/39» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2019 թվականի հոկտեմբերի 1-ին, ժամը 11:00-ին, «Ձվարթնոց» ԱՕԿ ՓԲ վարչական շենքում, ք.Երևան, օդանավակայան «Ձվարթնոց»-2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ՁԱՕԿ-ԳՀ-ԱՊՁԲ-19/39» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՁԱՕԿ-ԳՀ-ԱՊՁԲ-19/39» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 25-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել Պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Ատլանտ Էքստրա» ՍՊ և «Արգավանդ Կահույք» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. «ՁԱՕԿ-ԳՀ-ԱՊՁԲ-19/39» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Ա. Մուրադյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ իր կողմից հաստատված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը՝ էլեկտրոնային ձևով սահմանված

ժամկետում ներկայացվել են «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲ ընկերության meteo@arminco.com էլեկտրոնային փոստի հասցեին: 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Ա. Մուրադյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչել «Ատլանտ Էքստրա» ՍՊԸ-ին:

4.2. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ 2-րդ չափաբաժնով հաղթող ճանաչել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին:

4.3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.4. Անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագրի կնքման նպատակով «ՁԱՕԿ-ԳՀ-ԱՊՁԲ-19/39» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներն՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4.5. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ա. Մուրադյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Է. Դանիելյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Մ. Քոչարյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Հ. Ավագյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Գ. Սիմոնյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Վ.Պետրոսյան